

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհուրդը 1976 թվականի հունվարի 9-ի իր նիստում որոշեց. սույն թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը նշել Նորին Սրբության բացակայությամբ հոբելյանը և կատարել սրբալույս մեռոնի օրհնություն՝ սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը:

Գերագույն հոգևոր խորհուրդը կազմեց հետևյալ **հոբելյանական կենտրոնական հանձնաժողովը՝**

ՊԱՏՎՈ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝

Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք հայոց Երուսաղեմի.

Ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարք հայոց Ստամբուլի:

ՊԱՏՎՈ ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝

Տիար Ալեքս Մանուկյան—նախագահ Հայկական բարեգործական ընդհանուր միության.

Պրոֆ. Առաքել Առաքելյան—անդամ Գերագույն հոգևոր խորհրդի:

ՊԱՏՎՈ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան—հայրապետական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ հայոց Ֆրանսիայի.

Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան—առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.

Տ. Բաբգեն արքեպ. Ապատյան—հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի և առաջնորդ Արգենտինայի հայոց.

Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան—առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի:

Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովը կազմելու է առաջադրված հանդիսությունների ծրագիրը:

Սույն հանդիսություններին հրավիրվելու են հայ եկեղեցու նվիրապետական Աթոռները, թեմական առաջնորդները, թեմական կազմակերպությունների, ինչպես նաև քույր եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
2-ը փետրվարի 1976 թ.